

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Բ,

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ

Մ Ի Ա Հ Ե Մ Ա Ն Ի Ն Ք Ն Ա Կ Ա Լ

Ա Մ Ե Ն Ա Յ Ն Ռ Ռ Ի Ս Ա Յ

ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ:



շխարհ՝ զոր աշն էին հաստեալ ինքնաբար՝  
եւ մարդկութեան կարգեաց որրան եւ զազար,  
Գեղապաճոյճ զարդու լուսով ծայրալիր,  
սրկարագրեաց արկեր պատկեր իմն յերկիր:

Իսկ երբ ոտուաւ մահ՝ զըժոխոցն ընդ զըրունս՝  
եւ հաս յարգրը՝ ածեալ զաւեր եւ զաղունս,  
Սերովբէին սուր բոցաշունչ տըւեալ Տէր՝  
Պահել զաշխարհն այն սիրելի հրամայէր:

Նոյն հինաւուրց Տէր, ոյր հանդէպ՝ բիւրաւոր  
Ամբ՝ իբր ըզմի լոկ վազագրաւ գրեան օր,  
եւ որոյ սէր եւ գուժ փոխիլ ոչ զիսէ  
Ժամանակաց եւ յարկածից փոխմանէ,

Նոյն Տէր յաշխարհն այն խոնարհեալ բազմահոգ  
Իծայր դարուց լուսավարսամն իւր բրբօք,  
Ետես զաղէարս գոռալով զունդագունդ  
Ապականել զիւր դաստակերտ նախածնունդ:

Գորովեցաւ եւ գոչեաց. „Մի՛ յաւիտեան  
Մի՛ սիրելին իմ մոռացի Հայաստան“.  
Եւ կարկառեալ յերկնից զիւր սուր բոցեռանդ,  
Վե՛հԱՓԱՌ Տէ՛ր, իձեռքս Քո տայր աւանդ:

Իձեռքս Քո՝ որ զօրութեամբ մեծապանձ՝  
Չորից ծագաց ունիս յաղթող Տէր ըզսանձ,  
Եւ իյօնիցդ իսաստ պատգամ՝ ծովք քառեակ  
Շունչ եւ զպիս կալեալ՝ կան լուռ ըսպատեակ:

Իձեռքս Քո՝ որ իփառաց բազմեալ Գահ՝  
Յաջ/եւ յահեակ սարկէլ ~~բազմեալ~~ ոսման՝,  
Լրծակ կրշոռց զազգաց բիւրուց բառնալով՝  
Ըզհին Կեսարս թողուս նրսնմ գոտիւք Քով

Իձեռս անդ Քո — իկար եւ գութ զոյգ անյաղթ —  
Հայաստանեայց Բարձրեալն անմահ ետ ըզբաղդ,  
Եւ զերդ նախնու՝ ըզհոակերպեանրն զուարթուն՝  
Եւ արդ ըզՔոյդ աջ իպահպան եդ նորուն:

Ահա որ շուրջ ըզմեօք ցածեան խեռ մըրրիկք:  
Փախեաւ իսուար իլոյս աշացդ ակնարկիք,  
Եւ քաղցր իձայն Քո՝ շանթք ամպրոպք մերծեցան,  
Եւ եօթնալար ծաւալեցաւ Ծիածան:

Ահա Մասեաց փայլեալ ճակատ մըթազգած՝  
Յազատն Ուրալ ողջոյն ասէ խրնդազգած.  
Եւ զուգածայն 'նեվայ' Վոլկայ' Հայն Արաքս,  
ՎեհՍ.ԶԸՆ Տէ՛ր, ըզՔո փառաց տայ նըւագս:

Վարազաթեւ յԱրծույղ Քոյին հովանի  
Պատրսպարեալ եւ մեր հեզիկ Աղաւնի,  
Մընչէ զայերս ազատ իթիւտդ երկնաձեմ,  
Զի եւ ընդ Քեզ ելցէ Հայոց բախտ նըսեմ.

Եւ զարմասցի աշխարհ տեսեալ զի Դո՛ւ, Տէ՛ր,  
Գիտես փոխել իւրոյ ըզմո՛ւթըն գիշեր.  
Եւ իծոցոյ բազմադարեան ձըմերանց  
Աջ Քո բըխէ յանկարծ զարուն մեզ անանց:



